

զիրն վասն մեր արզ արաւ քազաւորին. եղեւ հրաման գնալու» (տես տող 33—35):

Եթէ քաղաքական առաքելութեամբ չըլլար այդ ճամբորդութիւնը, կը խորհիմ թէ թագաւորին աւագ պաշտօնատարը իրեն համար դիմու՛մ ընելու և հրաման առնելու պէտք պիտի չունենար:

Վերոգրեալ նախընթաց դեպքանութիւններու պատմութիւնները աչքի առջև ունենալով, ասիկա կրնանք ապացոյց մը նկատել իր առաքելութեան քաղաքական բնոյթին:

Նոյնպէս նշանակելի է, որ իր պատմութեան մէջ որոշ կը տեսնուի, թէ ինք շատ մօտը սպրտած է արքունիքին, պալատին հետ շփումներ ունեցած և կայսերական տան ներքին կեանքին ծանօթացած (տես տող 63—104):

Բայց նշանակելի է, որ հոս ալ կը պահէ խոր հրդեալոր լուծիւն մը և չ'ըսեր, թէ ինք ինչպէս կայսեր պալատին մօտեցած և հոն ելեւձուտք ունեցած է:

Դիտելի է նաև, թէ հապէշ կզերը, որ պալատին հետ իր յարաբերութիւններուն ականատեսէր, զինքը վշտացնելու կամ զգուեցնելու աստիճան կը հարցափորձէ և իր կրօնքին մասին կասկածամտութիւն ցոյց կու տայ, այնպէս որ այս պատճառով իբր թէ կը հեռանայ:

Հապէշները եւրոպական դեպքանութիւններու յաջորդող կաթոլիկ վարդապետներու հաւատած աւալ գործունէութենէն խրաչած և տեսած էին Հայու տարազով կաթոլիկ մարդորս կրօնաւորներ, որոնք մտորեցնել յաջողած էին իրենց թագաւորներն իսկ. կ'երեւայ թէ Յովհաննէս Թիւթիւնճի կայսեր քով ազատ ելեւձուտք ունենալէն վրդովուած էին և վախ-